

“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ Լ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1901

ԹԻՒ 3

ՊՂՆՁԷ ՕՁԸ

Ի՞նչ ազդու է պղնձէ օձին պատմութիւնը : Անպատին մէջ թափառելու երկար ժամանակը վերջանալու մտա էր, և Մովսէսի եղբայրը Ահարոն արդէն մեռած էր : Բայց իսրայէլի ժողովուրդը, հակառակ իրենց տրուած բոլոր սոսկալի դասերուն, տակաւին ազէկ մը չէր սորված Եհովայի հնազանդիւնը : Երբ Եղովթի երկրին բոլորտիքը կը պարտէին, ճամբորդութեան դժուարութիւններուն համար «ժողովուրդը Աստուծոյ դէմ ու Մովսէսին դէմ խօսեցան» : Այն ատեն Աստուծոյ պատժեց զանոնք բանակին մէջ բազմաթիւ օձեր զրկելով, որոնք «կիզող» կը կոչուին, կամ անոր համար որ անոնց խաճած տեղը կ'այրէր, և կամ անոր համար որ իրենց վրայ պայծառ կարմիր պիսակներ ունին : Այսպիսի օձեր հիմա կը գտնուին այն կողմերը, և Պէտէվի կոչուած Արաբները շատ կը վախնան անոնցմէ : Այն ատեն Աստուծոյ Մովսէսի հրամայեց պղնձէ օձ մը շինել այն օձերուն նման և ձողի մը ծայրը հաստատել, և ով որ պղնձէ օձին նայէր, կ'ապրէր : Բժշկելու կարողութիւնը օձին մէջ չէր, հապա Աստ-



ղութեամբ, այն ատեն կը փրկուինք :

ՈՎ Կ՛ՈՒՁԷ ՕԳՆԵԼ ՄԱՅՐԻԿԻՆ

Ի՞նչ բազմաշխատ և կարեկից կեանք մը կ'անցնէ մայրը առ հասարակ : Տանը և ընտանիքին պատասխանատուութիւնները և բեռներուն մեծ մասը անոր ուսերուն վրայ կը ծանրանան : Շատ անգամ գիշերները անքուն կ'անցընէ հիւանդ զաւակը սնուցանելու և անոր պէտքերը հոգալու համար, մինչ ընտանիքին բոլոր միւս անդամները իրենց սովորական հանգիստը կը վայելեն : Առաւօտուն ալ ինք առաջինն է որ կ'ելլէ նախաճաշ պատրաստելու հայրին և տղոցը համար, որպէս զի անոնք ուշ չմնան խանութ կամ գործանոց երթալու : Շատ տուներու մէջ արգուկելու (իւթիւլմէք) ե-

ուած կը բժշկէր, վասն զի անոր նա յողը կը ցուցնէր թէ կը հնազանդէր և կը հաւատար :

Եւ մեր Տէրը ինքզինք պղնձէ օձին կը նմանցնէ : Անիկա բարձրացաւ խաչին վրայ, ինչպէս որ օձը բարձրացաւ ձողին վրայ, և եթէ մեղքին յանցանքէն և ցաւէն ազատուիլ փափաքելով Անոր նայինք հաւատքով և հնազան-

վելու, տղայոց հանդերձները նոր և մաքուր պահելու և, հազնուելու պատրաստ վիճակի մէջ, ծալելով մէկդի դնելու գործը անոր վրայ կը ծանրանայ :

Եւ նոյն ժամանակ անոր արագաշարժ մատները պէտք է փակցնեն կոճակները, նորոգեն կոճակի ծակերը և կարկտեն հանդերձի պատառուածները


զորոնք տղաքը ըրած են ցատկը տելու  
 և խաղալու առեն : Շատ անգամ նաև  
 մօրը կ'իյնայ մաքուր և կոկիկ պահել  
 սենեակները զորոնք մանչերն ու աղ-  
 ջիկները թողած են մեծ անկարգու-  
 թեան մէջ, ամէն տեսակ հանդերձնե-  
 րով խառնակ, որոնք մէկ կողմ նետ-  
 ուած են դպրոց հասնելու համար ան-  
 պարեղնուն պատճառաւ : Մայրը պէտք  
 է որ խաղաղեցնէ ամէն մէկ վէճ, միտք  
 բերէ թէ ո՛ւր կը գըտ-  
 նուի ամէն մէկ դպրո-  
 ցական տոպրակ, պա-  
 յուսակ, գլխարկ, վե-  
 րարկու : Պէտք է որ  
 կարեկցի և օգնէ երբ  
 մատ մը կը կտրուի կամ  
 ձեռք մը կ'այրի, և  
 գործէ ու մտածէ ըն-  
 տանիքին ամէն մէկ  
 անդամին համար : Ի՞նչ  
 ամայի տեղ մը պիտի  
 ըլլար տունը առանց  
 մայրին օգնութեանը՝  
 ամէն մէկ դժուարու-  
 թեան և նեղութեան  
 առեն :

Տան մէջ գտնուող դեռահասակ-  
 ները քիչ մը խորհելով և անձնազո-  
 հութիւն ընելով կրնան մայրին բեռը  
 թեթևեցնել և ուրախացնել ու սիրով  
 անոր սիրտը : Պէտք է որ անոր փոք-  
 ըրիկ հոգերը և պարտականութիւնները  
 թեթևեցնելու պատեհութիւններ փըն-  
 տուեն : Եթէ հարկ է, ձեր ընկերնե-  
 րուն հետ խաղալը ընդմիջեցէք երբեմն  
 երբեմն մէկ ժամ, կարող ըլլալու հա-  
 մար նայիլ կիրք երած մանկիկը որ շատ  
 յոգնեցուցած է մայրը : Առէք գործը  
 մայրին յոգնած ձեռքերէն և համոզե-  
 ցէք զանիկա որ քիչ մը պառկի և հան-  
 գիստ առնէ, որուն շատ պէտք ունի,  
 մինչ դուք անոր գործը կատարէք :  
 Որչափ որ կրնաք, օգնեցէք անոր, իր  
 կեանքը զուարթ և երջանիկ ընելու  
 համար : Յիշեցէք որ անիկա իր կեան-  
 քին ամենէն աղէկ մասը անցուցած է  
 ձեզի ծառայելու և ձեզ խնամելու  
 համար :


ՆՈՐԹ-ՉԵՆԻՍ ԸՆԿԵՐԱՆ

Անցեալ ամիս Հերմոն լեռան դըպ-  
 րոցին վերաբերող երկու շէնքերուն  
 պատկերները դրինք : Այն դպրոցը,  
 որ մանչերու յատուկ է, հիմնեց վախ-  
 ճանեալ Մր. Մուտի : Այս յոգուա-  
 ծին հետ կը դնենք հիմա նաև աղը-  
 կանց համար բացուած Նորթ-Չֆիլտ  
 ձեմարանին երկու շէնքերուն պատ-

կերները : Այս ճեմարանն ալ, որ գե-  
 տին միւս կողմն է, Մր. Մուտի հիմ-  
 նած է 1879ին : Հարուստ բարեկամ-  
 ներ ուրախութեամբ օգնեցին անոր  
 որպէս զի ի գործ դնել իր փափաքը :  
 Յիշեալ հաստատութեան ցուցակին մէջ  
 կ'ըսուի թէ «ձեմարանը բացուած է  
 գլխաւորապէս այնպիսի աղջիկներու  
 համար, որ լաւ կարողութիւն և ան-  
 կերդ նպատակներ ունին, որոնց տու-



ները հեռու են դպրոցէն և որոնք չու-  
 նին միջոցներ սովորական գիշերօթիկ  
 դպրոցներն երթալու : Այս ճեմարա-  
 նին նպատակն է քրիստոնէական կա-



տարեալ դաստիարակութիւն մը տալ  
 աղջիկներու : Տրուած կըթուլիւնը,  
 ճեմարանին վարչութիւնը և ազդեցու-  
 թիւնն այնպէս են որ կը հաւատացուի թէ  
 շատ պիտի նպաստեն աշակերտուհիներ  
 ըր բարի ընելու և շատ յարմար են զա-  
 նոնք բարիք գործելու նուիրուող կեան-  
 քի պատրաստելու համար :” Նորթ-Չ-  
 ֆիլտ, ուր ծնած է Մր. Մուտի, շատ  
 գեղեցիկ և առողջարար օդ ունեցող  
 քաղաք մըն է : Գիշերօթիկ աշակերտ-  
 ները տարին 100 տոլար (22½ օսմ. ոսկի)

կը վճարեն և ուսման ընթացքը աղէկ  
 կարգադրուած է : ձեմարանին հողը  
 1,000 արտավարէ աւելի է : Այդ հո-  
 ղին վրայ ճեմարանը ունի գեղեցիկ  
 լիճ մը, որուն վրայ աշակերտուհիները  
 կը թիափարեն ամառը և կը չնկեն ձը-  
 մեռը : Դպրոցական տարիին վերջին  
 ցուցակին մէջ նշանակուած է 372 ու-  
 սանող, և գրուած է թէ ճեմարանը  
 235 ընթացաւարտ հանած է մինչև

1899 : Հոս ներկայաց-  
 ուած երկու շէնքերէն  
 մին է Լսարանը, որ շին-  
 ուած է ամառնային  
 ժողովներու համար որ  
 կը գումարուին Նորթ-Չ-  
 ֆիլտի մէջ, Հոն 2,500  
 ուսանողներու նստա-  
 րան կայ : ձեմարանը  
 կը գործածէ զանիկա  
 նուագահանդէսներու  
 և մեծ ժողովուհներու  
 համար : Միւս շէնքն է  
 ուսանողներու դասա-  
 րանը, որ դասառու-  
 թեան բազմութիւ և  
 յարմար սենեակներ և  
 գիտութեան գործնական փորձերու  
 համար աշխատանոց մը կը պարունակէ :  
 Ասոնցմէ զատ կան ութ ուրիշ շէնքեր,  
 որոնք կը պարունակեն աշակերտնե-  
 րուն սենեակները, գրքատան շէնք մը,  
 մարմնամարզարան մը և շոգեգործ լու-  
 ացարան մը ճերմակեղէն հանդերձ-  
 ներու համար :

ՉԻՆԱՐԷՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ


Պատ. Ս. Գէմպըլ Պրատն, որ Չի-  
 նաստանի Ամոյ քաղաքին մէջ գործա-  
 կալ է Բրիտանական Աստուածաշնչի  
 ընկերութեան, Աւետարանի մը սա  
 ուրախալի պատմութիւնը գրկած է .  
 Ութ տարի առաջ մարդ մը թանթէ  
 գեղէն որ Չինչիւի հարաւային դրան  
 դուրսի դին կը գտնուի, քանի մը Աւե-  
 տարան գնեց, որոնց մէջ կար Մատ-  
 թէոսի Աւետարան մը : Անոր գեղը որ  
 10,000է աւելի բնակիչ ունի, ժամա-  
 նակաւ Միաստուածութիւն կը դաւա-  
 նէր, բայց վերջին երկու երեք հար-  
 իւր տարիներուս մէջ կուպայտութեան  
 մէջ ինկած է : Սակայն գեղին կու-  
 պայտական սովորութիւնները ուրիշ  
 տեղերու նոյն սովորութիւններէն աւելի  
 քիչ են : Յիշեալ մարդը տուն տարաւ  
 իր Աւետարանները և կը կարդար զա-  
 նոնք : Անոնք իր հետաքրքրութիւնը  
 շարժեցին և բարձր ձայնով կը կար-

դար զանոնք իր բարեկամներուն: Սէհ Հիա անուն մարդ մը, որ անոր ունկընդորոզ բարեկամներուն մէջ կը գտնուէր, սքանչացաւ այն փոքրիկ գիրքին մէջի ճշմարտութեան գեղեցկութեան վրայ: Քանի մը տարի անցաւ, և այնպէս պատահեցաւ որ Ակիա, Աստուածաշնչի ընկերութեան գործակալներէն մին, վերոյիշեալ թանթէ գեղը գնաց: Հոն փողոցներուն մէջ քարոզեց և գիրքեր ծախեց. և վերջապէս մեծ խանութ մը եկաւ, ուր շատ ջերմ սիրով ընդունուեցաւ: Հրատարակեց թէ Աստուծոյ Սուրբ խօսքէն մասեր կը ծախէ: Սէհ Հիա ըսաւ, «Ո՛հ, ես գիտեմ քու գիրքերդ, շատ պատուական են անոնք, ներս եկուր և աւելի խօսէ անոր պարունակած վարդապետութեան վրայով:» Երկուր ժամանակ մտիկ ընելէ ետև, Ակիան հրաւիրեց իրեն հետ ճաշելու, և Ակիա շատ երջանկութեամբ լեցուած տուն գնաց: Վասն զի ոչ միայն Սէհ Հիա ունկըդրած էր փափաքով, հապա մեծ բազմութիւն մը հաւաքուած էր այն ընդարձակ խանութին մէջ, փրկութեան աւետիսը լսելու համար, և անոնցմէ ոմանք ալ Սուրբ գիրք ծախու առած էին:

Տարի մը կամ աւելի անցած էր, և Ակիա կը քարոզէր Չինչիւի հարաւային դրան դուրսի կողմը սրահի մը մէջ: Պաշտօնէն ետքը ունկնդիրները ստակի հաւաքում մը ըրին սրահին վարձքը վճարելու համար, իւրաքանչիւրը մէյմէկ քիչ գումար տալով: Մարդ մը որ ներկայ էր, եօթը դահեկան տուաւ, ըսելով թէ կ'ուզէր օգնել այդ նպատակաւ: «Բայց մենք ստակ չենք առներ առաջին անգամ ունկնդրելու եկող բարեկամներէն, եղբայր», ըսաւ Ակիա: «Բայց ասիկա առաջին անգամը չէ», ըսաւ օտարականը: «Չէ՞ք յիշեր որ իմ խանութս եկաք և խօսեցաք ինձի Աստուծոյ վրայ, եղբայր Ակիա:» Անիկա Սէհ Հիա էր, որ ութ հազարամեթր հեռուէն եկած էր անգամ մին ալ լսելու համար ճշմարտութիւնը: Մատթէոսի Աւետարանին միջոցաւ ցանուած սերմը կը բուսնէր, կեանք կ'առնէր: Ակիայի ուրախութիւնը չափ չունէր, և միւս եղբայրներուն հետ միացաւ Բարի եկաք ըսելու այն նորեկին: Այդ օրէն ի վեր որ տարիէն աւելի կ'ընէ, Սէհ Հիայի եռանդուն դէմքը երբեք բացակայ չգտնուեցաւ պաշտամունքներէն: Շատ չանցած՝ բարեկամ մը բերաւ, Մր. Խօն, յետոյ ուրիշ մը, Մր. Քո Խոանը, և յետոյ ուրիշներ: Երէկ բաւական մեծ խումբի մը հետ ինձի

այցելեց տանս մէջ, խումբը երեսունէ աւելի էր, կը բողկանար այրերէ կիներէ և տղաքներէ, որոնք այդ օրը թանթէէ եկեղեցի եկած էին քալելով: Հիմա թանթէի բարեկամները Սէհ Հիայի առաջնորդութեամբ խանութ մը վարձած են իրբու առժամանակեայ եկեղեցի, և կը յուսանք թէ շատ չանցած պիտի գտնուի քարոզիչ մը որ աշխատի այս հաւատացեալ ժողովրդին մէջ: Միւսնոյն ատեն Սէհ Հիա զանոնք ամէն գիշեր իր տան մէջ կը հաւաքէ երկրպագութեան համար: Այրած է անիկա իր կուռքերը, և արտաքսած է իր տունէն կուսակալական սովորութիւնները, կուսակալները ըսած են քանի մը բնիկ եղբայրներու, որոնք հինգշաբթի օր թանթէ գացին իմ հետս, թէ Սէհ Հիա ճշմարտապէս անկեղծ է, սիրտը մաքուր է: Աստուծոյ ճշմարտ երկրպագող մըն է:»

Անիկա Մատթէոսի Աւետարանին մէկ օրինակին պատմութիւնն է:



ՊԱՏ. ԳՐԻԳՈՐ ԹԱՄԱՐԵԱՆ

Գեղացիի հազուատով մարդը, ուրուն պատկերը կը դնենք հոս, քրիստոսի մէկ խոնարհ ծառան էր, որ իր քարոզչական ամբողջ կեանքը անցուց իրբու հովիւ իշմէի Աւետարանական եկեղեցւոյն: Իշմէ գեղ մըն է լեռնագօտիի մը ոտքը որ խորբերդի դաշտին հարաւային սահմանը կը կազմէ: Յորդարուի աղբիւր մը, որ կը հասի ժայռէ պարիսպի մը վարի կողմէն, առատ ջուր կը մատակարարէ գեղին, և ջուրը կը վազէ կ'երթայ բաւական զօրաւոր հոսանք մը ձեւացնելով: Մենք հոն հովիւ գտանք Պատ. Գրիգորը երբ

1867ին խորբերդ գացինք, և կը կարծենք թէ անոր հովուական պաշտօնը 1863ին կամ 64ին սկսաւ: Անիկա գիտուն մէկը չէր, ոչ ալ պերճախօս քարոզիչ մը, բայց զինք կը յիշենք խորունկ համակրութիւնով: Այն յատկութիւնները, որոնք մեր աչքին զարկած են, անոր աղնիւ բնութիւնը, համբերութիւնը և քաղցրաբարոյութիւնն էին: Կը կարծենք թէ անոր բարեկամական համակրանքն էր որ զանիկա այնքան սիրելի ըրաւ իր ժողովրդին: Անոր մաքուր և զուարթ կեանքը իր քարոզած Աւետարանին յանձնարարական մըն էր իր ժողովրդին համար: Եւ անոր իր ժողովրդին վրայ ունեցած սէրը անոնց վատահոլութիւն կը ներշնչէր իր վրայ իրբու բարեկամի և հոգևոր առաջնորդի մը վրայ: Այսպիսի վատահոլութիւն հովիւ մը պէտք է վայելէ, որպէս զի բարձրագոյն օգտակարութիւն ունենայ: Այս է մեր ընդունած տպաւորութիւնը, թէպէտ Պատ. Գրիգորը մէկ անգամ միայն տեսանք վերջին գրեթէ երեսուն տարիներուն մէջ: Եւ պատմուեցաւ մեզի թէ երբ անիկա հրաժարական տուաւ, ըսելով թէ իր ժողովուրդը աւելի դեռահաս և աւելի կարող մարդու ծառայութիւններուն պէտք ունի, անոնք չընդունեցին անոր հրաժարականը, ըսելով թէ իրենց համար աւելի օգտակար է զանիկա տեսնել բեմին վրայ քան լսել ուրիշ մարդոց քարոզները: Մեզի բարեբաղդութիւն եղաւ որ 1882ին գիշեր մը անցուցինք անոր տան մէջ երբ վան կը վերադառնայինք մեր խորբերդ ըրած վերջին այցելութենէն: Պատ. Գրիգորի մահը պատահեցաւ 1895ին, և անոր բարի կինը Մարթա անկէ քանի մը տարի առաջ գնաց լաւագոյն աշխարհը:



ՄԱՆԿԻԿՆԵՐՈՒ ՆՈՐ ՄԵՎ ՕԳՈՒՏՈՐ

Առողջ մանկիկի մը փոքրիկ մարմինը շատ տաքութիւն կ'արձակէ: Շուտով կը տաքցնէ օրօրոց մը կամ անկողին մը երբ անոր մէջ դուրսի և աղուոր մը ծածկուի:

Երբ Տր. Բէյն իր ընկերներուն հետ կրօնական տնային հիւսիսային մասին մէջ կը գտնուէր, անգամ մը մահուան մօտ սառեցաւ: Այնքան մասձ էր որ բարեկամները մեծ դժուարութիւն կրեցին զանիկա տաքցնելով նորէն ապրեցնելու համար: Չանազան միջոցներ գործածուեցան նորէն տաքութիւն բերելու համար անոր մասձ մարմինն մէջ, բայց ամէն բան պարապ ելաւ: Վեր-

